Հաշվետվություն

2022 թվականի հոկտեմբերի 17-ից 21-ը Ռուսաստանի Դաշնություն (ք.Լյուբերցի) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը**

   Սամվել Բադալյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի պետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   ք.Լյուբերցի, Ռուսաստանի Դաշնություն, 2022 թվականի հոկտեմբերի 17-ից 21-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը**

   ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (ՄԾՂԽ) իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտե (ԻՍՂԿ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

   «Թմրամիջոցների մաքսանենգության դեմ պայքարում օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպում» միջոցառման մասնակցություն

6. **Քննարկված թեմաները**

   Անցկացված դասընթացի ընթացքում քննարկվել են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների մաքսանենգության կանխման, բացահայտման և այդ դեպքերով անցկացվող անհրաժեշտ և անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանակ առավել հաճախ առաջացող խնդիրների լուծման հետ կապված մի շարք հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Դասընթացն սկսվել է 2022 թվականի հոկտեմբերի 17-ին ՌԴ ֆեդերալ մաքսային ծառայության մաքսային ակադեմիայում, որտեղ ներկայացվել են ՌԴ-ում ներկա իրավիճակը թմրամիջոցների մաքսանենգության վերաբերյալ, ներկայացվել է ՌԴ ֆեդերալ մաքսային ծառայության մաքսանենգության դեմ պայքարի գլխավոր վարչության կողմից իրականացվող «Վերահսկելի մատակարարում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների պլանավորման, իրականացման և արդյունքների ամրագրման եղանակները, ներկայացվել են օպերատիվ-հետախուզական գործունեության

մեթոդաբանությունը, ինչպես նաև հանցագործների հոգեբանության և հանցագործների շրջանակը բացահայտելու նպատակով նրանց հետ համագործակցության աշխատանքներ տանելու մեթոդները:

2022 թվականի հոկտեմբերի 18-ին այցելություն է կատարվել Մոսկվայի Դոմոդեդովո օդանավակայան, ներկայացվել են օդանավակայանի տարածքում իրականացվող հսկողության ձևերը և բացահայտման մեխանիզմները:

2022 թվականի հոկտեմբերի 19-ին այցելություն է կատարվել ՌԴ ֆեդերալ մաքսային ծառայության շնագիտական կենտրոն, ներկայացվել են շնագիտական կենտրոնի աշխատանքները և մաքսային ծառայողի ու շնագետի համատեղ աշխատանքի առանձնահատկությունները:

2022 թվականի հոկտեմբերի 20-ին այցելություն է կատարվել Մոսկվայի Վնուկովո օդանավակայանի տարածքում գտնվող ՌԴ ֆեդերալ մաքսային ծառայության փոստի դասակարգման կենտրոն, ներկայացվել են կենտրոնի աշխատանքները, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների մաքսանենգության դեպքերի բացահայտման և այդ դեպքերով ձեռնարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների, մասնավորապես՝ «Վերահսկելի մատակարարում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման առանձնահատկությունները:

2022 թվականի հոկտեմբերի 21-ին այցելություն է կատարվել ՌԴ ֆեդերալ մաքսային ծառայության մաքսային ակադեմիա, որտեղ ներկայացվել են օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ տեղեկությունների վերլուծության և իրավապահ համագործակցության առանձնահատկությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները

Բանավոր պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավորության սահմաններում նմանատիպ դասընթացները դարձնել պարբերական և քննարկել համատեղ միջազգային վերահսկելի մատակարարում օպերատիվ-հետախուզական միջոցառում-վարժանքի իրականացման հնարավորությունը, ինչպես նաև հետագա համագործակցության ամրապնդման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Չկան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

25.10.2022թ.